

Նոր խմբագրությամբ գրանցված է

**Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում**

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

« __ » _____ 2010թ.

2011թ. հունվարի 25-ի
փոփոխություններով և լրացումներով

**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՌԵՎՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԿԱՆՈՆՆԵՐ**

Գլուխ 1. Հասկացություններ

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) **«Առևտրի կանոններ»**. Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններ»-ի, «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններ»-ի, «Պետական պարտատոմսերի առևտրի կանոններ»-ի, «Արտարժույթի առևտրի կանոններ»-ի և «Վարկային ռեսուրսների առևտրի կանոններ»-ի համախումբը:
- 3) **«Առևտրային համակարգ»**. Էլեկտրոնային եղանակով առևտրի կազմակերպման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման, ինչպես նաև Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված այլ գործառնությունների իրականացման համար Օպերատորի կողմից օգտագործվող տեխնիկական, ծրագրային և այլ միջոցների համախումբ:
- 4) **«Առևտրային օր»**. աշխատանքային օր, որի ընթացքում Օպերատորը կազմակերպում է ֆինանսական գործիքների առևտուր:
- 5) **«Առևտրային ցատաշրջան»**. առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված կարգով իրականացվում է ֆինանսական գործիքների առևտուրը:
- 5¹) **«Նախաառևտրային ցատաշրջան»**. առևտրային ցատաշրջանին նախորդող ժամանակահատված, որի ընթացքում Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված կարգով կարող են ներկայացվել առուվաճառքի գնման (վաճառքի) հայտեր, սակայն համապատասխան հանդիպակաց հայտերի առկայության դեպքում գործարքներ չեն կնքվում:
- 5²) **«Բացման աճուրդ»**. առևտրային ցատաշրջանի բացման պահը, որն անմիջապես հաջորդում է նախաառևտրային ցատաշրջանին, երբ նախաառևտրային ցատաշրջանի ընթացքում ներկայացված հայտերը Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված կարգով կարող են բավարարվել, իսկ չբավարարված հայտերն առևտրային համակարգից չեն հեռացվում և առևտրային ցատաշրջանի բացման պահից ընդգրկվում են երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կազմակերպվող առևտրային ցատաշրջանի համապատասխան Հերթերում:
(5-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 6) **«Հետառևտրային ցատաշրջան»**. առևտրային ցատաշրջանի ավարտին հաջորդող ժամանակահատված, որի ընթացքում Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված կարգով կարող են ներկայացվել հայտեր և կնքվել գործարքներ տվյալ ցատաշրջանին նախորդող առևտրային ցատաշրջանի ընթացքում ձևավորված միջին կշռված գնով:
- 7) **«Բորսայի անդամ»**. Օպերատորի «Անդամակցության և շուկային մասնակցության կանոններին» համապատասխան Բորսայի անդամի կարգավիճակ ստացած Շուկայի մասնակից:
- 8) **«Շուկա»**. օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված կարգով որևէ ֆինանսական գործիքի հրապարակային առևտուր կազմակերպելու նպատակով Օպերատորի կողմից կազմակերպված շուկա:
- 9) **«Շուկայի մասնակից»**. ՀՀ Կենտրոնական բանկը, ինչպես նաև այն Բանկերը, Վարկային կազմակերպությունները, Ներդրումային ընկերությունները և Արժույթային դիլերները, որոնք Օպերատորի հետ ունեն առևտրին մասնակցության վերաբերյալ գործող պայմանագիր և որոնց Օպերատորի կանոններին համապատասխան թույլատրվել է մասնակցելու որևէ շուկայում Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին:
- 10) **«Բանկ»**. ՀՀ օրենսդրությամբ սահմանված բանկային գործունեության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:
- 11) **«Վարկային կազմակերպություն»**. ՀՀ օրենսդրությամբ սահմանված վարկային կազմակերպության գործունեության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:
- 12) **«Ներդրումային ընկերություն»**. ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:
- 13) **«Առևտրի մասնակից»**. Շուկայի մասնակցի կողմից Շուկայում առևտրին մասնակցելու համար լիազորված ֆիզիկական անձ, որը Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված կարգով իրավունք ունի Շուկայի մասնակցի անունից մասնակցել առևտրին:
- 14) **«Առևտրի սրահ»**. առևտրի կազմակերպման համար Օպերատորի կողմից առանձնացված որոշակի տարածք, որտեղ տեղադրված և առևտրի մասնակիցներին հատկացված

- տերմինալների միջոցով առևտրի մասնակիցներն իրական ժամանակի ռեժիմում կարող են միանալ առևտրային համակարգին և Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված կարգով մասնակցել առևտրին:
- 15) **«Տերմինալ».** Օպերատորի առևտրի սրահում տեղադրված համակարգիչ, որին Օպերատորի կողմից տրված է առևտրային համակարգին միանալու անհատական թույլտվություն և որում տեղադրված է համապատասխան ծածկագրերով և գաղտնաբառերով առևտրային համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլը:
 - 16) **«Հեռացված տերմինալ».** Օպերատորի տարածքից դուրս գտնվող և Շուկայի մասնակցի կողմից առևտրին մասնակցելու նպատակով առանձնացված համակարգիչ, որին Օպերատորի կողմից տրված է առևտրային համակարգին միանալու անհատական թույլտվություն և որում տեղադրված է համապատասխան ծածկագրերով և գաղտնաբառերով ՍիԲիԷՅՆԵՔ համակարգչային ցանցով կամ ինտերնետով առևտրային համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլը:
 - 17) **«Օպերատոր».** «ՆԱՍԳԱԸ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց Բաժնետիրական Ընկերություն:
 - 18) **«Դեպոզիտարիա».** «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» Բաց Բաժնետիրական Ընկերություն:
 - 19) **«Գործարքի կնքում».** Օպերատորի Առևտրի կանոններով սահմանված կարգով գործարքի էական պայմանների և դրա արդյունքում ծագող իրավունքների ու պարտավորությունների վերաբերյալ առևտրի մասնակիցների միջև համաձայնության կայացում:
 - 20) **«Գործարքի գին».** գործարքի առարկա ֆինանսական գործիքի մեկ լոտի գին:
 - 21) **«Գործարքի գումար».** գործարքի արդյունքում ձեռք բերված ֆինանսական գործիքի դիմաց գնորդի կողմից վճարման ենթակա գումար (գործարքի գնի և գործարքի առարկա ֆինանսական գործիքի լոտերի քանակի արտադրյալը):
 - 22) **«Դրամային միջոցներ».** Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված դրամական միջոցներ:
 - 23) **«Լավագույն գին».** տվյալ ֆինանսական գործիքի գնման հայտերում նշված ամենաբարձր գինը կամ վաճառքի հայտերում նշված ամենացածր գինը:
 - 24) **«Լավագույն հայտ».** լավագույն գնով գնման (վաճառքի) հայտ:
 - 25) **«Լիմիտային հայտ».** անմիջապես ակտիվացմամբ գնման (վաճառքի) հայտ, որն առևտրային համակարգ մուտքագրվելու պահին կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ բավարարվել հայտում նշված կամ դրանից ցածր (բարձր) գնով, իսկ առևտրային համակարգ մուտքագրվելուց և հայտերի հերթում ընդգրկվելուց հետո՝ միայն հայտում նշված գնով:
 - 26) **«Շուկայական հայտ».** անմիջապես ակտիվացմամբ գնման (վաճառքի) հայտ, որն առևտրային համակարգ մուտքագրվելուց անմիջապես հետո կարող է բավարարվել վաճառքի (գնման) լավագույն գնով, հակառակ դեպքում չի ընդգրկվում հայտերի հերթում:
 - 27) **«Անմիջապես ակտիվացմամբ հայտ».** հայտ, որն ակտիվացվում է անմիջապես՝ առևտրային համակարգ մուտքագրվելու պահին:
 - 28) **«Ստոպ հայտ».** անմիջապես չակտիվացվող գնման (վաճառքի) հայտ, որն առևտրային համակարգ մուտքագրվելուց հետո ակտիվանում և վերածվում է շուկայական հայտի այն պահին, երբ առևտրային համակարգում տվյալ ֆինանսական գործիքով կնքվում է հայտում նշված ստոպ գնից բարձր (ցածր) գնով գործարք, որի գինը տարբեր է նախորդ գործարքի գնից:
 - 29) **«Ստոպ-լիմիտային հայտ».** անմիջապես չակտիվացվող գնման (վաճառքի) հայտ, որն առևտրային համակարգ մուտքագրվելուց հետո ակտիվանում և վերածվում է հայտում նշված լիմիտային գնով լիմիտային հայտի այն պահին, երբ առևտրային համակարգում տվյալ ֆինանսական գործիքով կնքվում է հայտում նշված ստոպ գնից բարձր (ցածր) գնով գործարք, որի գինը տարբեր է նախորդ գործարքի գնից:
 - 30) **«Լքիվ բավարարմամբ հայտ».** հայտ, որն առևտրային համակարգ մուտքագրվելուց անմիջապես հետո կարող է բավարարվել բացառապես հայտում նշված լոտերի լքիվ քանակի չափով, հակառակ դեպքում չի ընդգրկվում հայտերի հերթում:
 - 31) **«Մասնակի բավարարմամբ հայտ».** հայտ, որը կարող է բավարարվել ամբողջությամբ կամ մասնակիորեն:
 - 32) **«Պահել հերթում հայտ».** մասնակի բավարարմամբ հայտ, որի մասնակիորեն բավարարման դեպքում տվյալ հայտի չբավարարված մասն ընդգրկվում է հայտերի հերթում:

- 33) **«Հանել մնացորդը հայտ».** հայտ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող է բավարարվել միայն առևտրային համակարգ մուտքագրվելու պահին, իսկ հայտի չբավարարված մասը չի ընդգրկվում հայտերի հերթում:
- 34) **«Լոտ».** ֆինանսական գործիքի նվազագույն քանակություն, որը թույլատրվում է նշել տվյալ ֆինանսական գործիքի գնման կամ վաճառքի հայտում: Յուրաքանչյուր շուկայում Լոտի չափը սահմանվում է տվյալ շուկայի առևտրի կանոններով:
- 35) **«Հայտ».** առևտրի մասնակցի կողմից առևտրային համակարգ մուտքագրված՝ որևէ ֆինանսական գործիքի գնման (վաճառքի) առաջարկ, որն ուղղված է տվյալ ֆինանսական գործիքով առևտրի իրավունք ունեցող շուկայի բոլոր մասնակիցներին և որտեղ նշված են այդ առաջարկի բավարարման բոլոր էական պայմանները:
(35-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 36) **«Հասցեական առաջարկ».** առևտրային մատաչրջանի ընթացքում առևտրի մասնակցի կողմից առևտրային համակարգի միջոցով շուկայի որևէ մասնակցի ուղարկված՝ տվյալ ֆինանսական գործիքի առուվաճառքի կամ ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի կնքման առաջարկ, որի ակցեպտավորման դեպքում առևտրային համակարգում գրանցվում է գործարքի կնքում:
(36-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 37) **«Հայտի բավարարման էական պայմաններ».** առևտրի մասնակցի կողմից առևտրային համակարգ մուտքագրվող հայտում ներառվող պարտադիր պայմաններ, որոնց տվյալ հայտին հանդիպակաց որևէ հայտի բավարարման դեպքում առևտրային համակարգում գրանցվում է գործարքի կնքում:
- 38) **«Հերթ».** առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված և դեռևս չբավարարված՝ նույն ֆինանսական գործիքի գնման (վաճառքի) հայտերի կանոնակարգված հաջորդականություն:
- 39) **«Հանդիպակաց հայտեր».** գնման հայտերի համար՝ վաճառքի հայտերը և վաճառքի հայտերի համար՝ գնման հայտերը:
- 40) **«Համապատասխան հանդիպակաց հայտեր».** տվյալ հայտին հանդիպակաց այն հայտերը, որոնք համապատասխանում են տվյալ հայտի բավարարման էական պայմաններին և որոնց հիման վրա կնքվում է(են) գործարք(ներ):
- 41) **«Ռեպո գործարք».** առևտրի մասնակիցների միջև երկու փոխկապակցված՝ ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների կնքման վերաբերյալ ձեռք բերված համաձայնություն, որոնցից առաջինով կողմերից մեկը՝ դրամային միջոցների փոխառում, վաճառում է տվյալ ֆինանսական գործիքը դրամային միջոցների փոխատուին, իսկ երկրորդով պարտավորվում է նրանից հետո գնել դրանք ապագայում՝ տվյալ պահին համաձայնեցված պայմաններով:
- 42) **«Հակադարձ ռեպո գործարք».** առևտրի մասնակիցների միջև երկու փոխկապակցված՝ ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների կնքման վերաբերյալ ձեռք բերված համաձայնություն, որոնցից առաջինով կողմերից մեկը՝ ֆինանսական գործիքի փոխառում, գնում է ֆինանսական գործիքը դրանց փոխատուից, իսկ երկրորդով պարտավորվում է նրան հետ վաճառել դրանք ապագայում՝ տվյալ պահին համաձայնեցված պայմաններով:
- 43) **«Ֆինանսական գործիք».** Օպերատորի կողմից առևտրին թույլատրված բաժնետոմս, պարտատոմս, արտարժույթ, վարկային ռեսուրս կամ այլ ֆինանսական ակտիվ:
- 44) **«Կորպորատիվ արժեթղթեր».** ցուցակված արժեթղթեր (բաժնետոմսեր և պարտատոմսեր), ինչպես նաև ազատ շուկայի գործիքներ:
- 45) **«Պետական պարտատոմսեր».** Հայաստանի Հանրապետության անունից թողարկված գանձապետական պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսեր:
- 46) **«Արտարժույթ».** «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջոցներ:
- 47) **«Վարկային ռեսուրս».** Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված դրամական այն միջոցները, որոնք Շուկայի մի մասնակիցը որոշակի ժամկետով և տոկոսադրույքով Օպերատորի կանոններով սահմանված կարգով որպես փոխառություն նախատեսում է տրամադրել Շուկայի այլ մասնակցի:
- 48) **«Հարքակ».** Շուկայի հատված, որի համար Օպերատորի առևտրային համակարգում ստեղծված է համապատասխան միջավայր՝ շուկայի տվյալ հատվածում ֆինանսական գործիքներով կազմակերպվող առևտուրն առանձին չափանիշներին համապատասխան իրականացնելու նպատակով:

- 49) «Ազատ շուկայի գործիքների հարթակ». Օպերատորի կանոններին համապատասխան բաժնետոմսերի և կորպորատիվ պարտատոմսերի ազատ շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի հարթակ:
- 50) «Հապավում». Օպերատորի կողմից առևտրին թույլատրված ֆինանսական գործիքի նույն դասը կամ տեսակը բնութագրող տարբերակիչ կոդանիշ:
- 51) Օպերատորի Առևտրի կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Շուկայի կառուցվածքը

- 1) Օպերատորը օրենքով և իր կանոններով սահմանված կարգով կազմակերպում է հետևյալ շուկաները՝
 - ա) կորպորատիվ արժեթղթերի շուկա,
 - բ) պետական պարտատոմսերի շուկա,
 - գ) արտարժույթի շուկա,
 - դ) վարկային ռեսուրսների շուկա:
- 2) Սույն գլխի 1) կետում նշված շուկաները Օպերատորը կազմակերպում է իր հետևյալ հարթակներում՝
 - ա) ցուցակված բաժնետոմսերի հարթակ,
 - բ) ցուցակված պարտատոմսերի հարթակ,
 - գ) ազատ շուկայի գործիքների հարթակ,
 - դ) դրամական շուկայի գործիքների հարթակ,
 - ե) պետական պարտատոմսերի հարթակ,
 - զ) արտարժույթի հարթակ,
 - է) վարկային ռեսուրսների հարթակ:
- 3) Կորպորատիվ արժեթղթերով, պետական պարտատոմսերով և արտարժույթով առուվաճառքի գործարքների, իսկ վարկային ռեսուրսներով՝ վարկային գործարքների կնքումը Օպերատորը կազմակերպում է երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով՝ սույն կանոնների 7-րդ գլխով սահմանված կարգով:
- 4) Կորպորատիվ արժեթղթերով առուվաճառքի գործարքների կնքումը Օպերատորը կազմակերպում է նաև բացման աճուրդի եղանակով, իսկ իր հասցեական գործարքների հարթակում՝ նաև հասցեական առևտրի եղանակով՝ համապատասխանաբար սույն կանոնների 7¹-րդ և 8-րդ գլուխներով սահմանված կարգով:
(4-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 5) Սույն գլխի 3) կետում նշված ֆինանսական գործիքներով սույն կանոնների 9-րդ գլխով սահմանված կարգով Օպերատորի ռեպո գործարքների հարթակում կարող են կնքվել ռեպո գործարքներ՝ Օպերատորի կանոններով նախատեսված դեպքերում:
- 6) Թողարկողի կամ տեղաբաշխողի դիմումի հիման վրա արժեթղթերի տեղաբաշխումը, ինչպես նաև պետական մասնակցությամբ ընկերությունների՝ պետությանը պատկանող բաժնետոմսերի մասնավորեցումը Օպերատորի կողմից կազմակերպվում է արժեթղթերի տեղաբաշխման հարթակում՝ Օպերատորի «Արժեթղթերի տեղաբաշխման կանոններին» համապատասխան:
- 7) Օպերատորի կողմից առևտուրը կազմակերպում է միայն առևտրին թույլատրված ֆինանսական գործիքներով: Ֆինանսական գործիքներն առևտրին թույլատրվում են սույն գլխի 8) և 9) կետերին համապատասխան:
- 8) Կորպորատիվ արժեթղթերը և պետական պարտատոմսերը առևտրին թույլատրվում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններով» սահմանված կարգով:
- 9) Արտարժույթը և վարկային ռեսուրսները առևտրին թույլատրվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:

Գլուխ 3. Առևտրի կազմակերպումը

- 1) Ֆինանսական գործիքներով առևտուրն Օպերատորը կազմակերպում է իր էլեկտրոնային առևտրային համակարգի միջոցով:

- 2) Կորպորատիվ արժեթղթերի առևտուրը կազմակերպվում է սույն կանոններով և Օպերատորի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» սահմանված կարգով:
- 3) Պետական պարտատոմսերի առևտուրը կազմակերպվում է սույն կանոններով և Օպերատորի «Պետական պարտատոմսերի առևտրի կանոններով» սահմանված կարգով:
- 4) Արտարժույթի առևտուրը կազմակերպվում է սույն կանոններով և Օպերատորի «Արտարժույթի առևտրի կանոններով» սահմանված կարգով:
- 5) Վարկային ռեսուրսների առևտուրը կազմակերպվում է սույն կանոններով և Օպերատորի «Վարկային ռեսուրսների առևտրի կանոններով» սահմանված կարգով:

Գլուխ 4. Առևտրային օրեր և առևտրային նստաշրջաններ

- 1) Օպերատորի կողմից առևտուրը կազմակերպվում է Օպերատորի առևտրի սրահում տեղադրված տերմինալներից և/կամ հեռացված տերմինալներից ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցով կամ ինտերնետով առևտրային համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու միջոցով:
- 2) Կորպորատիվ արժեթղթերի, պետական պարտատոմսերի, արտարժույթի և վարկային ռեսուրսների առևտրային օրեր են բոլոր աշխատանքային օրերը:
- 3) Կորպորատիվ արժեթղթերի նախաառևտրային նստաշրջաններն անցկացվում են առևտրային օրերին, ժամը 10:50-ից մինչև 10:59-ը, բացման աճուրդները՝ 11:00-ին, իսկ առևտրային նստաշրջաններ՝ 11:00-ից մինչև 15:00-ը:
(3-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 4) Պետական պարտատոմսերի առևտրային նստաշրջաններն անցկացվում են առևտրային օրերին, ժամը 11:00-ից մինչև 15:00-ը, իսկ հետառևտրային նստաշրջանները՝ ժամը 15:00-ից մինչև 15:05-ը:
- 5) Արտարժույթի առևտրային նստաշրջաններն անցկացվում են առևտրային օրերին, ժամը 11:00-ից մինչև 15:00-ը, իսկ հետառևտրային նստաշրջանները՝ ժամը 15:00-ից մինչև 15:05-ը:
- 6) Վարկային ռեսուրսների առևտրային նստաշրջաններն անցկացվում են առևտրային օրերին, ժամը 11:00-ից մինչև 15:00-ը, իսկ հետառևտրային նստաշրջանները՝ ժամը 15:00-ից մինչև 15:05-ը:
- 7) Առևտրային նստաշրջանի սկիզբն ու ավարտը (բացումն ու փակումը) ազդարարվում է առևտրային համակարգի միջոցով առևտրի մասնակիցներին ուղարկվող համապատասխան հաղորդագրությամբ:

Գլուխ 5. Առևտրի մասնակիցները

- 1) Օպերատորի կողմից որևէ շուկայում կազմակերպվող առևտրին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն տվյալ շուկայի մասնակիցները:
- 2) Կորպորատիվ արժեթղթերի առևտրին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնք համարվում են կորպորատիվ արժեթղթերի շուկայի մասնակից:
- 3) Վարկային ռեսուրսների առևտրին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն բանկերը:
- 4) Կորպորատիվ արժեթղթերի և պետական պարտատոմսերի շուկայի մասնակիցների անունից հանդես եկող առևտրի մասնակիցները պետք է ունենան համապատասխան մասնագիտական որակավորում:
- 5) Շուկայի մասնակիցը կարող է ունենալ առևտրի մի քանի մասնակից, որոնք միաժամանակ կարող են մասնակցել առևտրին:
- 6) Շուկայի մասնակցին շնորհվում է առևտրային կոդ:
- 7) Առևտրի յուրաքանչյուր մասնակցի տրվում է ծածկագիր և գաղտնաբառ, որոնցով առևտրի տվյալ մասնակիցը կարող է գրանցվել առևտրային համակարգում և ստանալ առևտրին մասնակցելու թույլտվություն:
- 8) Առևտրի մասնակցին տրված ծածկագիրը և գաղտնաբառը համարվում են գաղտնի տեղեկություններ, որոնց կարող է տիրապետել միայն առևտրի տվյալ մասնակիցը: Առևտրի մասնակցին արգելվում է իրեն տրված ծածկագիրը և գաղտնաբառը երրորդ անձի, այդ թվում նաև՝ Շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մեկ այլ մասնակցի հայտնել կամ դրանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղեկանալու հնարավորություն ընձեռել:
- 9) Առևտրի մասնակիցներն առևտրի սրահ մուտք կարող են գործել միայն Օպերատորի կողմից տրված անցագրերով:

- 10) Առևտրի մասնակիցների գրանցումն առևտրային համակարգում սկսվում է նախաառևտրային (առևտրային) նստաշրջանի սկսվելու պահից 10 րոպե առաջ և ավարտվում է առևտրային (հետառևտրային) նստաշրջանի ավարտի պահին:
(10-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 11) Առևտրի մասնակիցներն առևտրային համակարգ ֆինանսական գործիքներով գնման (վաճառքի) հայտեր կարող են մուտքագրել նախաառևտրային (առևտրային) նստաշրջանի սկսման պահից: Հասցեական առաջարկների ներկայացում, ինչպես նաև ներկայացված հայտերի և հասցեական առաջարկների հիման վրա գործարքների կնքում թույլատրվում է միայն առևտրային նստաշրջանի բացման պահից սկսած: Հայտերն ու հասցեական առաջարկներն առևտրային համակարգ մուտքագրվում են միայն Շուկայի մասնակցի անունից և կարող են լինել սեփական կամ հաճախորդների հաշվին:
(11-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)

Գլուխ 6. Լրիվ նախնական դեպոնացմամբ առևտուր

- 1) Լրիվ նախնական դեպոնացմամբ առևտուրն իրականացվում է սույն գլխի պահանջների պահպանմամբ:
- 2) Լրիվ նախնական դեպոնացմամբ իրականացվող առևտրի ընթացքում առևտրի մասնակիցները գործարքներ կարող են կնքել նախապես դեպոնացված ֆինանսական գործիքների և դրամային միջոցների սահմաններում, որոնց մնացորդներն առևտրային (հետառևտրային) նստաշրջանի ընթացքում կարող են փոփոխվել սույն գլխի 4) 7) կետերում նշված դեպքերում և կարգով:
- 3) Մինչև առևտրային նստաշրջանի սկսվելը և նստաշրջանի ընթացքում դեպոնացված ֆինանսական գործիքների և դրամային միջոցների սկզբնական մնացորդների մասին տվյալներն ստացվում և առևտրային համակարգ են մուտքագրվում՝
 - ա) կորպորատիվ արժեթղթերի մասով՝ Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով,
 - բ) արտարժույթի մասով՝ Օպերատորի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններով» սահմանված կարգով,
 - գ) պետական պարտատոմսերի մասով՝ Օպերատորի «Պետական պարտատոմսերի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններով» սահմանված կարգով,
 - դ) վարկային ռեսուրսների մասով՝ Օպերատորի «Վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններով» սահմանված կարգով, ընդ որում դեպոնացվում է միայն ֆինանսական գործիքը՝ վարկային ռեսուրսը:
- 4) Շուկայի մասնակիցների կողմից Օպերատորի կանոններին համապատասխան կատարված լրացուցիչ դեպոնացումների դեպքում համապատասխան չափով ավելացվում են դեպոնացված միջոցների մնացորդները:
- 5) Առևտրի մասնակիցը Օպերատորի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով կարող է իր տերմինալից (հեռացված տերմինալից) ամբողջությամբ կամ մասնակի ապադեպոնացնել Շուկայի տվյալ մասնակցի դեպոնացված միջոցները՝ առևտրային համակարգում տվյալ պահին առկա և ազատ (չարգելադրված) մնացորդը կամ դրա մի մասը, որի դեպքում ապադեպոնացված միջոցների չափով նվազեցվում է դեպոնացված տվյալ միջոցի մնացորդը:
- 6) Առևտրի մասնակցի կողմից առևտրային համակարգ գնման հայտի (գնման հասցեական առաջարկի) մուտքագրման դեպքում տվյալ հայտում նշված՝ գործարքի գնի և լոտերի քանակի արտադրյալի չափով առևտրային համակարգում արգելադրվում է Շուկայի տվյալ մասնակցի կողմից դեպոնացված դրամային միջոցների մնացորդը, իսկ գործարքի կնքման դեպքում գնված ֆինանսական գործիքի լոտերի քանակի չափով ավելացվում է գործարքի արդյունքում գնված՝ տվյալ ֆինանսական գործիքի մնացորդը և գործարքի գումարի չափով նվազեցվում է դեպոնացված դրամային միջոցների մնացորդը:
(6-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 7) Առևտրի մասնակցի կողմից առևտրային համակարգ վաճառքի հայտի (վաճառքի հասցեական առաջարկի) մուտքագրման դեպքում տվյալ հայտում նշված ֆինանսական գործիքի լոտերի քանակի չափով առևտրային համակարգում արգելադրվում է Շուկայի տվյալ մասնակցի կողմից դեպոնացված՝ տվյալ ֆինանսական գործիքի մնացորդը, իսկ գործարքի կնքման դեպքում վաճառված ֆինանսական գործիքի լոտերի քանակի չափով նվազեցվում է

գործարքի արդյունքում վաճառված՝ տվյալ ֆինանսական գործիքի մնացորդը և գործարքի գումարի չափով ավելացվում է դեպոնացված դրամային միջոցների մնացորդը:

(7-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)

- 8) Առևտրի մասնակիցները առևտրային համակարգ որևէ ֆինանսական գործիքի վաճառքի հայտեր (վաճառքի հասցեական առաջարկներ) կարող են մուտքագրել տվյալ ֆինանսական գործիքի, իսկ գնման հայտեր (գման հասցեական առաջարկներ)՝ դրամով դեպոնացված միջոցների՝ տվյալ պահին առկա և ազատ (չարգելադրված) մնացորդների սահմաններում:

(8-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)

- 9) Սույն գլխի 6)-8) կետերի պահանջները տարածվում են նաև ռեպո գործարքների հասցեական առաջարկների վրա, ընդ որում՝

ա) ռեպո-ուղղակի գործարքի դեպքում դրամով փոխառության տրամադրումը և ֆինանսական գործիքով փոխառության ստացումը, իսկ ռեպո-հետադարձ գործարքի դեպքում ֆինանսական գործիքի հետ ընդունումը և դրամի վերադարձը համարժեք են գնման հասցեական առաջարկին,

բ) ռեպո-ուղղակի գործարքի դեպքում դրամով փոխառության ստացումը և ֆինանսական գործիքով փոխառության տրամադրումը, իսկ ռեպո-հետադարձ գործարքի դեպքում ֆինանսական գործիքի վերադարձը և դրամի հետ ընդունումը համարժեք են վաճառքի հասցեական առաջարկին:

(9-րդ կետի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)

Գլուխ 7. Երկկողմանի անընդհատ աճուրդ

- 1) Երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով ֆինանսական գործիքներով առուվաճառքի գործարքների կնքումն իրականացվում է առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված՝ ֆինանսական գործիքների գնման (վաճառքի) հայտերի անընդհատ համեմատման և համապատասխան հանդիպակաց հայտերի առկայության դեպքում դրանց բավարարման եղանակով՝ սույն գլխով սահմանված կարգով:
- 2) Երկկողմանի անընդհատ աճուրդի ընթացքում ներկայացվող հայտում նշվում են դրա բավարարման հետևյալ էական պայմանները՝
 - ա) ֆինանսական գործիքի հապավումը,
 - բ) հայտի տեսակը՝ գնման կամ վաճառքի,
 - գ) մեկ լոտի գինը (բացառությամբ շուկայական հայտի),
 - դ) լոտերի քանակը,
 - ե) հայտի բավարարման գնային պայմանը՝ լիմիտային կամ շուկայական,
 - զ) հայտի բավարարման քանակական պայմանը՝ լրիվ կամ մասնակի բավարարմամբ,
 - է) հայտի բավարարման ժամանակային պայմանը՝ պահել հերթում կամ հանել մնացորդը,
 - ը) հայտի ակտիվացման պայմանը՝ անմիջապես ակտիվացմամբ կամ ստոպ:
- 3) Առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված՝ տվյալ ֆինանսական գործիքի գնման և վաճառքի հայտերն ընդգրկվում են երկու առանձին Հերթերում՝ ըստ գնային առաջնահերթության: Գնման հայտերը համապատասխան Հերթում դասակարգվում են ըստ գների նվազման, իսկ վաճառքի հայտերը՝ ըստ գների աճման: Նույն Հերթում մեկից ավելի հայտերում նշված գների հավասարության դեպքում այդ հայտերը Հերթում դասակարգվում են ըստ առևտրային համակարգում դրանց գրանցման ժամանակային առաջնահերթության:
- 4) Առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրվող ցանկացած հայտի պայմանները համեմատվում են հանդիպակաց հայտերի Հերթում առկա հայտերի պայմանների հետ: Հանդիպակաց հայտերի Հերթում համապատասխան հանդիպակաց հայտի (հայտերի) առկայության դեպքում առևտրային համակարգում գրանցվում է առուվաճառքի գործարքի (գործարքների) կնքում:
- 5) Եթե առևտրային նստաշրջանի ընթացքում մասնակի բավարարմամբ ներկայացված հայտը համապատասխան հանդիպակաց բոլոր հայտերով բավարարվելուց (գործարքների կնքումից) հետո այնուամենայնիվ բավարարվում է մասամբ, ապա մնացորդը (հայտի չբավարարված մասը) ընդգրկվում է Հերթում սույն գլխի 3) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:
- 6) Եթե առևտրային նստաշրջանի ընթացքում մասնակի բավարարմամբ ներկայացված հայտին Հերթում համապատասխան հանդիպակաց հայտեր չկան, ապա այն ընդգրկվում է Հերթում

սույն գլխի 3) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:

- 7) Առևտրի մասնակիցներն իրավունք ունեն հանել Հերթում գտնվող՝ իրենց կողմից նախապես ներկայացված, սակայն դեռևս չբավարարված հայտերը կամ մասնակիորեն բավարարված հայտերի չբավարարված մասը, ինչպես նաև փոփոխել դրանցում նշված պայմանները (բացառությամբ ֆինանսական գործիքի հապավման և հայտի տեսակի):

Գլուխ 7¹. Նախաառևտրային նստաշրջան և բացման աճուրդ

- 1) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող բոլոր հայտերը լիմիտային հայտեր են, որոնցում նշվում են դրանց բավարարման հետևյալ էական պայմանները՝
 - ա) ֆինանսական գործիքի հապավումը,
 - բ) հայտի տեսակը՝ գնման կամ վաճառքի,
 - գ) մեկ լոտի գինը,
 - դ) լոտերի քանակը,
 - ե) հայտի բավարարման քանակական պայմանը՝ լրիվ կամ մասնակի բավարարմամբ,
 - զ) հայտի բավարարման ժամանակային պայմանը՝ պահել հերթում կամ հանել մնացորդը,
 - է) հայտի ակտիվացման պայմանը՝ անմիջապես ակտիվացմամբ կամ ստոպ:
- 2) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված՝ տվյալ ֆինանսական գործիքի գնման և վաճառքի հայտերն ընդգրկվում են երկու առանձին Հերթերում՝ ըստ գնային առաջնահերթության: Գնման հայտերը համապատասխան Հերթում դասակարգվում են ըստ գների նվազման, իսկ վաճառքի հայտերը՝ ըստ գների աճման: Նույն Հերթում մեկից ավելի հայտերում նշված գների հավասարության դեպքում այդ հայտերը Հերթում դասակարգվում են ըստ առևտրային համակարգում դրանց գրանցման ժամանակային առաջնահերթության:
- 3) Բացման աճուրդի եղանակով ֆինանսական գործիքներով առուվաճառքի գործարքների կնքումն իրականացվում է առևտրի մասնակիցների կողմից նախաառևտրային նստաշրջանի ժամանակ մուտքագրված՝ ֆինանսական գործիքների գնման (վաճառքի) հայտերի համեմատման և համապատասխան հանդիպակաց հայտերի առկայության դեպքում դրանց բավարարման եղանակով:
- 4) Բացման աճուրդի ժամանակ կնքվող յուրաքանչյուր գործարքի գինը հավասար է ըստ գնային առաջնահերթության պայմանի առաջնահերթ բավարարման ենթակա համապատասխան հանդիպակաց հայտերից այն հայտի գնին, որն առավել վաղ է մուտքագրվել առևտրային համակարգ:
- 5) Բացման աճուրդի ընթացքում չբավարարված հայտերն առևտրային համակարգից չեն հեռացվում և առևտրային նստաշրջանի բացման պահից ընդգրկվում են երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կազմակերպվող առևտրային նստաշրջանի համապատասխան Հերթերում:

(7¹. հոդվածի ավելացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)

Գլուխ 8. Հասցեական առևտուր

- 1) Օպերատորի հասցեական գործարքների հարթակում հասցեական առևտուր կարող է իրականացվել այն ֆինանսական գործիքներով, որոնցով մնան գործարքների կնքումը թույլատրվել է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, որի մասին առևտրային համակարգի միջոցով տեղեկացվում է առևտրի մասնակիցներին:
- 2) Հասցեական առևտուրն իրականացվում է ֆինանսական գործիքի գնման կամ վաճառքի հասցեական առաջարկի ակցեպտավորման եղանակով, երբ առևտրի որևէ մասնակից առևտրային համակարգի միջոցով ֆինանսական գործիքով առուվաճառքի գործարք կնքելուն ուղղված հասցեական առաջարկ (օֆերտա) է ուղարկում Շուկայի որևէ մասնակցի և վերջինիս առևտրի մասնակիցն առևտրային համակարգի միջոցով այն ակցեպտավորում է:
(2-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 3) Հասցեական առևտրի ժամանակ Շուկայի մասնակցին ուղարկվող՝ առուվաճառքի գործարքի կնքման հասցեական առաջարկում նշվում են հետևյալ պայմանները՝
 - ա) ֆինանսական գործիքի բոլորայական հապավումը,
 - բ) Շուկայի այն մասնակցի առևտրային կողը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը,
 - գ) հասցեական առաջարկի տեսակը՝ գնման կամ վաճառքի,

- դ) մեկ լոտի գինը,
 - ե) լոտերի քանակը:
- (3-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)**

Գլուխ 9. Գործարքների կնքումը ռեպո գործարքների հարթակում

- 1) Օպերատորի ռեպո գործարքների հարթակում ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ կարող են կնքվել միայն լրիվ նախնական դեպոնացմամբ առևտրի պայմաններում և այն ֆինանսական գործիքներով, որոնցով նման գործարքների կնքումը թույլատրվել է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, որի մասին առևտրային համակարգի միջոցով տեղեկացվում է առևտրի մասնակիցներին:
- 2) Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքումն իրականացվում է ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների կնքման հասցեական առաջարկի ակցեպտավորման եղանակով՝ սույն գլխով սահմանված կարգով:
(2-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 3) Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի կնքման նպատակով Շուկայի մասնակցին ուղարկվող հասցեական առաջարկում նշվում են հետևյալ պայմանները՝
 - ա) ֆինանսական գործիքի բորսայական հապավումը,
 - բ) Շուկայի այն մասնակցի առևտրային կոդը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը,
 - գ) հասցեական առաջարկի տեսակը՝ դրամով փոխառության տրամադրում, դրամով փոխառության ստացում, ֆինանսական գործիքով փոխառության տրամադրում, ֆինանսական գործիքով փոխառության ստացում,
 - դ) ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
 - ե) ռեպո-հետադարձ գործարքի գումարը,
 - զ) լոտերի քանակը,
 - է) ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների միջև ընկած ժամանակահատվածում օրերի քանակը՝ 0-ից մինչև 99-ը:

(3-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 4) Ռեպո-հետադարձ գործարքի ժամկետը չի կարող ուշ լինել տվյալ ֆինանսական գործիքի մարման օրվան նախորդող օրվանից (որոշակի ժամկետով թողարկված ֆինանսական գործիքների դեպքում):
- 5) Առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցներն իրավունք ունեն հանել իրենց կողմից ռեպո կամ հակադարձ ռեպո գործարք կնքելու նպատակով նախապես առևտրային համակարգ մուտքագրված հասցեական առաջարկները, ինչպես նաև փոփոխել դրանցում նշված պայմանները, եթե դրանք մինչ այդ չեն հաստատվել (ակցեպտավորվել) Շուկայի այն մասնակցի կողմից, ում ուղարկվել է տվյալ հասցեական առաջարկը:
(5-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 6) Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքը կնքվում է, երբ առևտրի որևէ մասնակցի կողմից առևտրային համակարգի միջոցով ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների կնքմանն ուղղված հասցեական առաջարկը (օֆերտան) առևտրային համակարգի միջոցով ակցեպտավորում է Շուկայի այն մասնակցի առևտրի մասնակցի կողմից, ում ուղարկված էր հասցեական հայտը:
(6-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 7) Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքը համարվում է կնքված առևտրային համակարգում դրա կնքմանն ուղղված հասցեական առաջարկի ակցեպտավորման փաստի գրանցման պահից:
(7-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 8) Տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում չակցեպտավորված հասցեական առաջարկներն առևտրային նստաշրջանի ավարտից հետո հեռացվում են առևտրային համակարգից և հաջորդ առևտրային նստաշրջանում չեն ընդգրկվում առևտրային համակարգում:
(8-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 9) Ռեպո-ուղղակի գործարքի կնքման պահին առևտրային համակարգը ձևավորում է ռեպո-հետադարձ գործարքի հաշվետվությունը, որն անմիջապես տեսանելի է դառնում տվյալ ռեպո գործարքի կողմերին, սակայն հաստատման համար ակտիվանում է ռեպո-հետադարձ գործարքի կնքման առևտրային օրվա համապատասխան առևտրային նստաշրջանի բացման պահից:
(9-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)

- 10) Ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքի կնքման պահից մինչև դրանով սահմանված՝ ռեպու-հետադարձ գործարքի կնքման օրվա առևտրային նստաշրջանի ավարտը ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքի կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ փոփոխել ռեպու-հետադարձ գործարքի կնքման օրը և գործարքի գումարը:
- 11) Ռեպու-հետադարձ գործարքի կնքման օրվա և/կամ գործարքի գումարի փոփոխություն կարող է նախաձեռնել միայն ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքով դրամային միջոցների կամ ֆինանսական գործիքի փոխատուն՝ առևտրային համակարգի միջոցով համապատասխան հասցեական առաջարկ ուղարկելով փոխառուին: Հասցեական առաջարկը փոխառուի կողմից ընդունման (ակցեպտավորման) պահից ռեպու-հետադարձ գործարքի համապատասխան պայմանը համարվում է փոփոխված:
(11-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 12) Մինչև ռեպու-հետադարձ գործարքի կնքման ժամկետի լրանալը ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Առևտրի մասնակիցները ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքի լուծման համաձայնագիրը կնքում են գրավոր և այդ մասին պարտավոր են տեղեկացնել Օպերատորին համաձայնագրի կնքման օրվա ընթացքում՝ կցելով համաձայնագրի պատճենը:
- 13) Եթե ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքի լուծման համաձայնագիրը նախատեսում է ռեպու-ուղղակի գործարքով ստացված միջոցների վերադարձման պարտավորություն, ապա այն իրականացվում է կողմերի միջև համաձայնեցված կարգով:
- 14) Ռեպու-հետադարձ գործարքի կնքման համար ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքով դրամային միջոցների կամ ֆինանսական գործիքի փոխառուն ռեպու-հետադարձ գործարքի կնքման համար ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքով նախատեսված առևտրային օրվա համապատասխան առևտրային նստաշրջանի փակման պահից առնվազն 15 րոպե շուտ պարտավոր է իր կողմից առաջինը հաստատել առևտրային համակարգում ռեպու-ուղղակի գործարքի կնքման պահին ձևակերպված՝ ռեպու-հետադարձ գործարքի կնքման հասցեական առաջարկը:
(14-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 15) Ռեպու կամ հակադարձ ռեպու գործարքով դրամային միջոցների կամ ֆինանսական գործիքի փոխատուն պարտավոր է մինչև առևտրային նստաշրջանի ավարտը ակցեպտավորել դրամային միջոցների կամ ֆինանսական գործիքի փոխառուի կողմից հաստատված հասցեական առաջարկը:
(15-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)

Գլուխ 10. Գործարքների գրանցման վկայականները

- 1) Առևտրային նստաշրջանի ավարտից հետո Օպերատորը ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները:
- 2) Շուկայի յուրաքանչյուր մասնակցի կողմից կնքված գործարքների համար ձևակերպվում է գրանցման վկայական, որը միաժամանակ Օպերատորի հաշվետվությունն է Շուկայի մասնակցին՝ վերջինիս կողմից կնքված գործարքների վերաբերյալ:
- 3) Գործարքների գրանցման վկայականի էլեկտրոնային օրինակն առևտրային նստաշրջանն ավարտվելուց հետո 30 (երեսուն) րոպեի ընթացքում ուղարկվում է Շուկայի համապատասխան մասնակցի՝ ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցի Լոտուս Գոմինո սերվերում գրանցված իրավասու էլեկտրոնային հասցեին, բացառությամբ սույն գլխի 4) կետում նշված դեպքի: Գործարքների գրանցման յուրաքանչյուր վկայականի էլեկտրոնային օրինակի հաղորդագրությունը պետք է պարտադիր օժտված լինի հաղորդագրության առաքումը և ստացումը հաստատող անդորրագրերը ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի էլեկտրոնային ստորագրությամբ և ծածկագրումով:
- 4) Այն դեպքում, երբ Շուկայի մասնակիցը միացված չէ ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցին կամ ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցով հաղորդագրության ուղարկումն անհնար է, գործարքի գրանցման վկայականը պատրաստվում է թղթային կրիչով՝ երկու օրինակից, որի մեկ օրինակը ստորագրությամբ տրվում է գործարքի համապատասխան կողմին, իսկ երկրորդ օրինակը մնում է Օպերատորի մոտ:
- 5) Գործարքների գրանցման վկայականում պետք է նշվեն Շուկայի մասնակցի անվանումը, նրա կազմում կամ անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից կնքված գործարքների

տվյալները, Օպերատորին վճարման ենթակա միջնորդավճարի գումարը: Գործարքների գրանցման վկայականի ձևը սահմանում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը:

Գլուխ 11. Առևտրի ընթացքին միջամտելը

- 1) Առևտրի ընթացքում Օպերատորի առևտրի սրահում կարող են գտնվել առևտրի մասնակիցները, ՀՀ կենտրոնական բանկի լիազորված ներկայացուցիչը և առևտրի տեխնիկական սպասարկումն իրականացնող Օպերատորի աշխատակիցները: Առևտրի մասնակիցների մոտ առևտրի վերաբերյալ ոչ տեխնիկական բնույթի խնդիրների առաջացման դեպքում առևտրի մասնակցի միջնորդությամբ և առաջացած խնդիրը հարթելու նպատակով Օպերատորի առևտրի սրահում կարող են գտնվել Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը և առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը:
- 2) Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի թույլտվությամբ տրված համապատասխան անցագրերի հիման վրա առևտրային նստաշրջանի ընթացքում Օպերատորի առևտրի սրահի՝ դիտորդների համար նախատեսված տեղերից առևտրի ընթացքին կարող են հետևել նաև այլ անձինք՝ դիտորդի կարգավիճակով, որոնք իրավունք չունեն մասնակցել գործարքների կնքմանը, ինչպես նաև ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջամտել առևտրի ընթացքին:
- 3) Առևտրային նստաշրջանի ընթացքին միջամտելու (տվյալ նախաառևտրային և/կամ առևտրային նստաշրջանի բացման ժամի հետաձգում, նախաառևտրային կամ առևտրային նստաշրջանի ժամանակավոր, այդ թվում նաև՝ տեխնիկական, ընդմիջման հայտարարում, ընդմիջված նախաառևտրային կամ առևտրային նստաշրջանի վերսկսում, առևտրի դադարեցում) իրավունք ունեն Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը, առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը և ՀՀ կենտրոնական բանկի լիազորված ներկայացուցիչը՝ սույն գլխով սահմանված դեպքերում, որի մասին Օպերատորը առևտրային համակարգի, ՍԻԲԻԷՄԵթ համակարգչային ցանցի կամ հեռախոսի միջոցով տեղեկացնում է Շուկայի մասնակիցներին և ՀՀ կենտրոնական բանկին:
(3-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 4) ՀՀ կենտրոնական բանկի լիազորված ներկայացուցիչը կարող է միջամտել առևտրի ընթացքին միայն Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի կամ առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի միջոցով:
- 5) Նախաառևտրային և/կամ առևտրային նստաշրջանի՝ սույն կանոններով սահմանված բացման ժամը կարող է հետաձգվել Օպերատորի կանոններով նախատեսված դեպքերում կամ առևտրային համակարգի կամ դրան միանալու համար նախատեսված կապի միջոցների հետ կապված տեխնիկական խնդիրների առաջացման դեպքում, բայց ոչ ավել, քան 2 (երկու) ժամով, որից հետո հետաձգման պատճառները վերացված չլինելու դեպքում առևտրային նստաշրջանը Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի կամ առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ հայտարարվում է չկայացած:
(5-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 6) Առևտրային նստաշրջանը կարող է ընդմիջվել կամ դադարեցվել առևտրի մասնակիցների կողմից Օպերատորի կանոնների խախտման, առևտրի բնականոն ընթացքի խաթարման կամ առևտրի մասնակիցների գործողություններում գնային չարաշահումների կամ դրան հանգեցնող գործողությունների արձանագրման դեպքերում:
- 7) Առևտրային նստաշրջանի ընթացքում կարող են հայտարարվել նաև տեխնիկական ընդմիջումներ՝ առևտրային համակարգի կամ դրան միանալու համար նախատեսված կապի միջոցների հետ կապված տեխնիկական խնդիրների առաջացման դեպքում՝ մինչև համապատասխան խնդրի վերացումը: Տեխնիկական ընդմիջումն առանց ընդհատումների կարող է տևել 2 (երկու) ժամից ոչ ավել:
- 8) Առևտրային նստաշրջանը կարող է դադարեցվել Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի կամ առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ, եթե սույն գլխի 7) կետին համապատասխան հայտարարված տեխնիկական ընդմիջման ընթացքում չեն վերացվել տվյալ նստաշրջանի ընդմիջման համար հիմք հանդիսացած պատճառները:
- 9) Ընդմիջված առևտրային նստաշրջանը կարող է վերսկսվել առևտրի ընդմիջման համար հիմք հանդիսացած պատճառների վերացումից հետո՝ Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի

- կամ առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կարգադրությամբ:
- 10) Առևտրի մասնակիցների կողմից մինչև առևտրային նստաշրջանի ընդմիջվելը առևտրային համակարգ մուտքագրված հայտեն ու հասցեական առաջարկները պահպանվում են առևտրային համակարգում նաև ընդմիջված առևտրային նստաշրջանի ընթացքում, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրի մասնակիցը ՍԻԲԻԷՆԵՑ համակարգչային ցանցի միջոցով հաղորդագրություն է ներկայացնում Օպերատորի ՍԻԲԻԷՆԵՑ համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո սերվերում գրանցված համապատասխան էլեկտրոնային հասցեին կամ գրավոր դիմում է Օպերատորին՝ իր կողմից առևտրային համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված բոլոր հայտերն առևտրային համակարգից հեռացնելու խնդրանքով, որի դեպքում Շուկայի տվյալ մասնակցի բոլոր չբավարարված հայտերն առևտրային համակարգից հեռացվում են:
(10-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
 - 11) Առևտրի սրահում գտնվող անձինք պարտավոր են կատարել սույն կանոնների դրույթների պահպանմանն ուղղված պահանջները: Նշված պահանջները չկատարած կամ դրանց խախտմամբ գործած անձինք հեռացվում են առևտրի սրահից Օպերատորի ներկայացուցչի պահանջով:

Գլուխ 12. Արտաբորսայական գործարքներ

- 1) Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից սահմանված դեպքերում և կարգով Շուկայի մասնակիցները պարտավոր են Օպերատորին տեղեկացնել Շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով իրենց կողմից Օպերատորի առևտրային համակարգից դուրս կնքված գործարքների վերաբերյալ:

Գլուխ 13. Օպերատորի ներքին հաշվառման գրանցամատյանները

- 1) Առևտրի մասնակիցների, նրանց կողմից ներկայացված հայտերի հասցեական առաջարկների և կնքված գործարքների հաշվառման նպատակով Օպերատորը վարում է սույն գլխով սահմանված՝ ներքին հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանները:
(1-ին կետի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
- 2) Առևտրի մասնակիցների գրանցամատյանում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝
 - ա) Շուկայի մասնակցի անվանումը, հասցեն, կապի միջոցները,
 - բ) Օպերատորի և Շուկայի մասնակցի միջև կնքված համապատասխան պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը,
 - գ) Շուկայի մասնակցի՝ Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցությունը թույլատրող լիցենզիաների համարները և տրման ամսաթիվերը,
 - դ) առևտրի մասնակցի անունը, ազգանունը, ինչպես նաև որակավորման վկայականի սերիան, համարը և տրման ամսաթիվը,
 - ե) առևտրի մասնակցի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան, համարը և տրման ամսաթիվը,
 - զ) Շուկայի մասնակցի կողմից առևտրի մասնակցին տրված՝ տվյալ շուկայում առևտրին մասնակցելու իրավունք տվող լիազորագրի տրման և գործողության ժամկետը,
 - է) Օպերատորի կողմից Շուկայի մասնակցին տրված առևտրային կողը,
 - ը) Օպերատորի կողմից առևտրի մասնակցին տրված ծածկագիրը:
- 3) Հայտերի գրանցամատյանում նախաառևտրային նստաշրջանի և առևտրի մասնակիցների կողմից երկկողմանի անընդհատ աճուրդի ընթացքում ներկայացված յուրաքանչյուր հայտի համար ներառվում են հետևյալ տեղեկությունները՝
 - ա) Օպերատորի կողմից հայտին տրված տարբերակիչ համարը,
 - բ) հայտում նշված ֆինանսական գործիքի հապավումը,
 - գ) առևտրային համակարգում հայտի գրանցման ժամանակը,
 - դ) հայտի տեսակը և հայտի բավարարման այլ էական պայմանները:
(3-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)
- 3¹) Առուվաճառքի և ռեպո գործարքների կնքման նպատակով ներկայացված հասցեական առաջարկների գրանցամատյանում առևտրի մասնակցի կողմից ներկայացված յուրաքանչյուր հասցեական առաջարկի համար ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

- ա) հասցեական առաջարկով նախատեսվող գործարքին Օպերատորի կողմից տրված տարբերակիչ համարը,
 - բ) հասցեական առաջարկում նշված ֆինանսական գործիքի հապավումը,
 - գ) հասցեական առաջարկ ներկայացրած Շուկայի մասնակցին Օպերատորի կողմից տրված առևտրային կողը,
 - դ) Շուկայի մասնակիցը ում հաշվին է կնքում գործարքը,
 - ե) հասցեական առաջարկով նախատեսված գործարքի տեսակը,
 - զ) հասցեական առաջարկում ներառված՝ առուվաճառքի կամ ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
 - է) հասցեական առաջարկում ներառված՝ ռեպո-հետադարձ գործարքի գումարը,
 - ը) ռեպո տարեկան տոկոսադրույքը,
 - թ) հաճախորդի ծածկագիրը (եթե հասցեական առաջարկը ներկայացվել է շուկայի մասնակցի հաճախորդի հաշվին),
 - ժ) գործողության տեսակը («ներկայացում», «փոփոխում», «փոփոխության հաստատում», «հեռացում», «գործարքի կնքում», «երկարաձգման փոփոխության հաստատում» (այն դեպքում, երբ տեղի է ունենում ժամկետի երկարաձգման հաստատում՝ անկախ այլ փոփոխությունների տեղի ունենալու հանգամանքից), «կրճատման փոփոխության հաստատում» (այն դեպքում, երբ տեղի է ունենում կրճատման հաստատում՝ անկախ այլ փոփոխությունների տեղի ունենալու հանգամանքից) կամ «մարում»),
 - ժա) առևտրային համակարգում հասցեական առաջարկի ներկայացման ժամը (ժամ:րոպե:վայրկյան),
 - ժբ) ռեպո գործարքի ժամկետը (օրերի քանակը),
 - ժգ) շուկայի այն մասնակցի առևտրային կողը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը: **(3¹ կետի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)**
- 4) Երկկողմանի անընդհատ աճուրդի և բացման աճուրդի ընթացքում կնքված գործարքների գրանցամատյանում յուրաքանչյուր գործարքի համար ներառվում են հետևյալ տեղեկությունները՝
- ա) Օպերատորի կողմից գործարքին տրված տարբերակիչ համարը,
 - բ) գործարքի կնքման ժամանակը,
 - գ) գործարքի կողմեր հանդիսացող՝ Շուկայի մասնակիցների անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից ներկայացված համապատասխան հայտերի տարբերակիչ համարները,
 - դ) գործարքի կողմեր հանդիսացող՝ Շուկայի մասնակիցների առևտրային կողերը,
 - ե) գործարքի առարկա ֆինանսական գործիքի հապավումը,
 - զ) գործարքի գինը (վարկային գործարքների դեպքում՝ տոկոսադրույքը),
 - է) գործարքի առարկա ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
 - ը) գործարքի գումարը (բացառությամբ վարկային գործարքների): **(4-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 30.11.2010թ.)**
- 5) Հասցեական առևտրի ընթացքում կնքված գործարքների գրանցամատյանում յուրաքանչյուր գործարքի համար ներառվում են հետևյալ տեղեկությունները՝
- ա) Օպերատորի կողմից գործարքին տրված տարբերակիչ համարը,
 - բ) գործարքի կնքման ժամանակը,
 - գ) գործարքի կողմեր հանդիսացող՝ Շուկայի մասնակիցների առևտրային կողերը,
 - դ) գործարքի առարկա ֆինանսական գործիքի հապավումը,
 - ե) գործարքի գինը,
 - զ) գործարքի առարկա ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
 - է) գործարքի գումարը:
- 6) Ռեպո գործարքների գրանցամատյանում յուրաքանչյուր գործարքի համար ներառվում են հետևյալ տեղեկությունները՝
- ա) Օպերատորի կողմից գործարքին տրված տարբերակիչ համարը,
 - բ) գործարքի կնքման ժամանակը,
 - գ) գործարքի կողմեր հանդիսացող՝ Շուկայի մասնակիցների առևտրային կողերը,
 - դ) գործարքի առարկա ֆինանսական գործիքի հապավումը,
 - ե) գործարքի տեսակը՝ ռեպո կամ հակադարձ ռեպո,
 - զ) ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
 - է) ռեպո-հետադարձ գործարքի գումարը,

- ը) գործարքի առարկա ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
 - թ) ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների միջև ընկած ժամանակահատվածում օրերի քանակը:
- 7) Մույն գլխում նշված գրանցամատյանների ձևերը սահմանում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը: Գրանցամատյաններում գրառումները կատարվում են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 18:00-ը:
(7-րդ կետը նոր խմբագրությամբ գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)
(8-րդ և 9-րդ կետերի ուժը կորցնելը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 24.02.2011թ.)

Գլուխ 14. Առևտրային համակարգի անվտանգության ապահովումը, պահուստային կրկնօրինակները և արարողակարգերը

- 1) Առևտրային համակարգի անվտանգության կազմակերպումն ուղղված է ապահովելու առևտրային համակարգում պահվող և շրջաբերվող տեղեկատվության գաղտնիությունը, առևտրային համակարգի միջոցով իրականացվող գործառնությունների անընդհատությունը, առևտրային համակարգի աշխատանքի հուսալիությունը, ինչպես նաև բացառելու տեղեկատվության չարտոնված օգտագործումը, փոփոխումը, ոչնչացումը, առևտրային համակարգ չարտոնված ներթափանցելու փորձերի իրագործումը, իրավասությունների անթույլատրելի վերաբաշխումը, տեղեկատվության կորուստը կամ թերի առաքումը:
- 2) Առևտրային համակարգում պաշտպանության են ենթակա առևտրային համակարգով շրջաբերվող բոլոր մուտքային տվյալները և ելքային տեղեկատվության աղբյուրները, ինչպես նաև համակարգչային ծրագրերը, տվյալների բազաները, գաղտնագրման բանալիները, արխիվային ֆայլերը:
- 3) Յուրաքանչյուր առևտրային օրվա վերջին առևտրային նստաշրջանների ավարտից հետո պարտադիր կարգով պատրաստվում և չիրկիզվող պահարաններում պահպանվում են սույն գլխի 2) կետում նշված՝ պաշտպանության ենթակա տվյալները, բազաները, համակարգչային ծրագրերը, գաղտնագրման բանալիները, արխիվային ֆայլերը:
- 4) Շուկայի մասնակցի մոտ տեղակայված՝ առևտրային համակարգի հեռացված տերմինալի միջոցով առևտրային համակարգ հայտեր մուտքագրելու կամ առևտրին մասնակցելու նպատակով իրականացվող այլ գործողություններ կատարելու անհնարինության դեպքում առևտրի մասնակիցը պետք է անհապաղ տեղեկացնի առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանմանը և համապատասխան գործողությունները կատարի Օպերատորի առևտրի սրահում տեղակայված տերմինալից:
- 5) Օպերատորի առևտրի սրահում տեղակայված որևէ տերմինալի միջոցով առևտրային համակարգ հայտեր մուտքագրելու կամ առևտրին մասնակցելու նպատակով իրականացվող այլ գործողություններ կատարելու անհնարինության դեպքում առևտրի մասնակիցը պետք է անհապաղ տեղեկացնի առևտրի կազմակերպումն ապահովող Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանմանը և համապատասխան գործողությունները կատարի վերջինիս կողմից հատկացվող պահուստային տերմինալից:

Գլուխ 15. Ծառայողական տեղեկությունների օգտագործման և շուկայի չարաշահման արգելումը

- 1) Շուկայի մասնակիցներին, առևտրի մասնակիցներին, ինչպես նաև Օպերատորի պաշտոնատար անձանց և աշխատակիցներին արգելվում է ծառայողական կամ ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործմամբ Օպերատորի կողմից կազմակերպվող շուկայում գործարքներ կնքել, ինչպես նաև կատարել գնային չարաշահումներ կամ դրանց նպաստող գործողություններ:

Գլուխ 16. Առևտրի կանոնների պահպանման վերահսկումը և պատժամիջոցների կիրառումը

- 1) Առևտրի կանոնների պահանջների պահպանման վերահսկողությունն իրականացվում է Օպերատորի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից:
- 2) Առևտրի կանոններով սահմանված պահանջների խախտման համար Շուկայի մասնակիցը պատասխանատվություն է կրում Օպերատորի և Շուկայի տվյալ մասնակցի միջև կնքված

պայմանագրով, Օպերատորի կանոններով և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

- 3) Առևտրի կանոնների պահպանման վերահսկողության շրջանակներում Շուկայի մասնակիցների միջև կամ Օպերատորի և Շուկայի մասնակիցների միջև ծագած վեճերը լուծվում են Օպերատորի կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 17. Կանոններում փոփոխությունները և լրացումները

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:
- 2) Սույն կանոնները նոր խմբագրությամբ ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված օրը՝ սույն կանոնների նոր խմբագրությամբ նախատեսված փոփոխությունների կիրարկումն ապահովող բոլոր փաստաթղթերի և պայմանագրերի ստորագրումից հետո:

Հաստատված է

«ՆԱՍԴԱԶ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ

դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Արմեն Մելիքյան**

«16» նոյեմբերի 2009թ.

ք. Երևան

ՀՖԲ-01/116Լ